

ՍՈՎՆ ՓԱՐԻԶՈՒ

Ի

ՀԵՆՐԻԱԿԱՆ ԷՆ ՎՈԼԴԵՌԻ



Իսկ իբրև այն ինչ ապա հուսկ Սենայ ջուրքն արգելականք
 Ի բերոցքն կասեցին 'ի շինաւանս յայս լայնանիստ
 Ըզջայրաց շուրջանակի առբերելոյ հունձս 'ի պարէն.
 Մինչ 'ի վեր եկն 'ի Բարիզ սով տըխրերանդ և ապառուժ
 Վաղ իսկ լեալ չարագուշակ՝ որում՝ ըզհետն ընթանայր մահ.
 Ողբոց յայնժամ լըսելի եղեն կառանչք զարհուրագոյ.
 Փարիզն այն խրոխտապանժ լըցաւ ողորմ՝ չուառականօք,
 Որոց ձեռն լըքեալ, հեղձամըղձուկ ձայն բարբառոյն
 Ի նանիր ժըտէին զոգէպահիկն աւուրց կենաց:
 Ուր զրաջն ըզկնի ճըգանց՝ և մեծատունն իսկ փոյթ ընդ փոյթ
 Ի մըլթերս անդ գանձուցըն տանջեցաւ սովալըլուկ:
 Ո՛չ ևս խաղքն, ոչ տօնախումբքն էին, ո՛չ ևս իւրախճանուլիւնք՝
 Ուր մըրտենեաւ և վարդիւ պըսակս 'ի գլուխըս կապէին,
 Ուրանօր 'ի չուայտանս հեշտիցն իսպառ դուզնաճաշակ՝
 Ընդ յարկօք ոսկեձեղուն՝ 'ի մեղկութեանն հեշտ զըրգանոցս,
 Ամենահամքն 'ի բերս որթոց, ազգ ազգ խորտկաց համբաւատենչք
 Եային արհամարհոտ քըմացն յորդոր չըկամութեան:
 Ի սոսկումն էր տեսանել անդ զեխելոց ըլքնաւ զայս գունդ՝
 Տըժգոյնս և դակահարս և յաչսն մահ կենդանագերեալ,
 Որ 'ի գիրկըս ճոխութեան անդ՝ կենաղրաւս 'ի տուայտանաց
 Յընչիցըն լիութիւն սւմպէտ՝ նըզովըս կարդային:
 Զառամն յեցեալ յալիս՝ զոյր սով կարճէ զկենացն աւուրս,
 Զորդեկին տեսանէ զօրհաս տնօք 'ի խանձարուրս:
 Վախճան մահու առ մոլուցս հասանէ տան մի աստ ողջոյն.
 Խառնաղանձ տառապելոց անդուստ գայռեալ հողախըշտի
 Դեռ ևս՝ 'ի չունչ վախճանին՝ ապշոպէին առ 'ի միմեանց
 Ըզմիացորդն զաղիր խոհերց փըցուն 'ի կերակրոց:
 Քաղցալից ուրուականացն ամբարըշտեալ և 'ի բնութիւն,
 Ի խորշոց դամբանաց վազեն հանել զկենայըն պիհ.
 Յորոց՝ ջինջ իբրու ցորեան՝ հնարիւք պաշաէր հանդերձանաց
 Քըստմիասարսուռ դիականց անդ փոշելից ոսկերտօին:
 Բաբէ, յինչ ոչ մըտանեն հընարս աղէսք զըժոխըմբեր.
 Անդ ըզնոսին տեսանել էր հարցն յաճիւն զի բուժանին.
 Զաշակն այն քապենի ճեպեալ զօրհասսն տաղնապեաց,
 Եւ յազուրդ այնուգունակ՝ հուսկն 'ի ճաշակս եղև նորին,
 Արդարև գերերջանիկ ընդ հրաժարելն 'ի կենցաղոյս:
 Խառնամբոխ սյլաղգեաց եռայր գեռայր յոստանն 'ի բուն,
 Վագերց ասեմ՝ որ նախնեաց մերոց 'ի գիրկս առնուին տաժ,
 Քան ըզմահ, քան զպատերազմն անապորոյնք և քան ըզսովն,
 Ելեալ հասեալ գային կէսք 'ի դաշտացըն Բելգիայ,

Այլք յապառաժն 'ի ժայռից և 'ի լերանց հեղուետական ,
 Խուժադուժք՝ գործ առօրին որոյ խաղմից են մըրցութիւնք ,
 Որ զարիւնս իսկ ուժ գիարդ կամ է գնողաց տան արծաթոյ ,
 Գուգազն անյագուրդ բըռնաւորացս այն ինչ նորեկ
 Պատեալ պաշարեն ըզտունս , ըզգրունսն խորտակեն ,
 Մահունըս բիւր 'ի բնիկս անդ հասուցեալ հիազարհուրս ,
 Ոչ 'ի կապուտ կողպուտ ինչ մըթերից անշահեկան ,
 Եւ ոչ նենգաժող արդեօք ձեռամբ յառանգել
 Ըղբուսոր արտասուալից առ մարն իւրով երերագին .
 Զամենայն իսկ շիջուցեալ անցոյց բնաւին յօժարութիւն
 Հարկն ըսպառիչ ծիրական անդէն սովոյն դըժոխստանջ .
 Հանդիպումն և նաև դոյզըն ճաշակաց բարեպատեհ
 Կէտ միակ ուշի մըտաց հետազօտմանն էր դըժնդհակ :
 Զեղեն վիշտ տանջանաց ուրեք , կրտտանք և արհաւիրք ,
 Զոր՝ յամբիցն 'ի գիւտ՝ չետես չեգիտ նոցուն գազանութիւն :
 Կին մի , ո՛հ ... մեծդ Ոստուած , և այսքան բուռն առնիցէ հարկ
 Յուշ վիպացըն քըստմենի բերել և զայնր անցիցըն դէպս ,
 Կին մի լեալ էր տեսող հուսկ նըխարացն ոգեպահիկ
 Յանողորմըն սըրտից աստի՜ թափեալ 'ի ձեռանէն ,
 Ի յընչիցըն կապտելոց անդուժ բաղդին յառ և յապուռ՝
 Որդի մի մնայր միածին իւր պէս ինքեան մահահարաւէր .
 Մատի նա սուր 'ի ձեռին գազանացեալ սըրտմըտութեամբ
 Առ ծնունդս այս անմեղ՝ որ թեւս առ ինքըն տարածէր .
 Ծիչ նորին , մատաղ տիք , չըւառութիւն , աղապատանք ,
 Յալաց մօրըն մոլեգին դեստ արտասուաց իլուցանեն .
 Զահպիւտ կերպարանացն հուսկ յորդին կոյս ուղղէ գնըշմար ,
 Համակ 'ի սէր ու 'ի կըսկիծ , 'ի զայրացումն և 'ի գորով .
 Երիցս 'ի կըթոտ ձեռանէն սուրն անկան՝ 'ի ստոր ,
 Զոր մոլուցք տպա գերծուն , և 'ի ճըլին դառնակոռոյ
 Անիծեալ ըզհարսանիս իւր և զպըտուղս որովայնին .
 « Որդեակ սիրաւընունդ՝ զոր կըրեցիս 'ի յարգանդի ,
 Եւ մօրըս ծնունդ թըշուառական , հիմ , աւէ , զկեանսըդ շնորհեցի ,
 Զոր արդ տուի հուպ ընդ հուպ և կամ խռովիչքս ունին կարճել ,
 Եւ ուժ ըզքեզ պահեցից . 'ի լա՛ց , 'ի կո՛ծ աստ 'ի փարիզ
 Եղկելի և թափառ՝ ըզփրտակօք աւերակացն .
 Մեռիւր չև չարեաց իմոց ըզփորձ առեալ և զաղետիցդ .
 Տուր զընկալեալդ առ 'ի մօրէս զարիւն , տուր ինձ զարև կենացդ .
 Եւ արգանդիս չարարաստ թող ընծայի քեզ 'ի դամբան ,
 Եւ զի գէթ յիսնէն եղեռն անլուր կալցի մուտ 'ի փարիզ » :
 Ի վախճան այսոցիկ բանից՝ ցնորեալ մոլեգնաբար ,
 Թափ 'ի կողըս որդւոյն կըչոեալ անդ ձեռն իւր յուսահատ՝
 Դողազին սարսափմամբ մըխէ գերկալթն արիւնախանձ .
 Եւ զդին բոտորաներկ տարեալ 'ի բոց վառարանին ,
 Դաստիւրն՝ զոր 'ի չտապ տաղնապէր քաղցն անագորոյն ,
 Քըստմենի զազգ կերակրոյն հասուցանէ անյագաբար .
 Առ հարկի սովոյն վտանգաց անդրէն վիրազ ըսպառաղէնքն
 Ընդ կրունկըն դարձ արարեալ խուժեն 'ի վայրն եղեռնաւոր .
 Համեմատ խաղացք նոցուն է կայտաանացըն խընդամուլ

Արջուց և առիւծուց յորս ինչ վայրագ խղայցելոց,
 փութացեալ այր քան զընկեր մոլին յընթացն արչաւասոյր .
 Ըզգրունսն խորտակեն, և ով սարսուռ, ով ապաւթիւն,
 Արինըռուչտ մօտ դիական աչաց իւրեանց անդ երեւի
 Կին ոմն արիւնաթոր և 'ի ցնորիցն բանդադուչ:
 « Այո, ճիւղղք զազանասիրտ, իմ է որդի սա ճըշմարիտ .
 Դուք ըզձեռս իմ, ասէ, յարիւն նորին թաթաւեցէք .
 Կերայք օն առ մի նուագ աստ և ըզմայրն ընդ որդեկին .
 Մի երկիւղ ձեզ, չըլինիք քան զիս բնութեան ապախտաւորք .
 Գանի արհաւիրք աչացս իմոց զի ցամաքիք .
 Ձեզ, ով վագերք, սոյնգունակ խրախճանութեանց հասոյթք 'ի ճահ »:
 Ձոյդ բանիցն մնկկան՝ զոր դանդաչէր նա 'ի չըրթանց՝
 Հար մըխեաց պողովատիկ ըզսուրն 'ի սիրտ իւր յանկարծոյն,
 Յայն տեսիլ ճիւղղուցն պակուցեալ հիազարհուր,
 Ի փախուստ խուճապական աճապարեն տազնապափոյթ,
 Անժըպիրհը առ գամ՝ մի ևս հայել 'ի տունն աղետաւոր .
 Կարծեալ իմն այնպէս թէ յանձինըս տեղայցէ հուր 'ի յերկնուստ .
 Էւ ժողովուրդն յարհաւրաց բաղդին հարեալ զահի մեծի
 Ձեռնամբարձ՝ 'ի խընդիր մահու զերկինս ողորէին:

Թարգմ. Հ***

ԶԱՊԵԼ

Ձապէլ՝ մինչդեռ տղայ փոքրիկ,
 Աղքատներուն կու տար հացիկ,
 Մութացկանին ճամբուն վերայ,
 Նա սիրտ կու տար՝ որ դիմանայ .
 « Քուկին արցունք պիտի դադրին
 « Վասն արտասուաց Մարիամ կուսին:
 « Սըրտանց սիրէ զՄարիամ կոյս,
 « Նա չի թողուր ըզքեզ անյոյս »:

Մօտի գեղին տըւարածին
 Նա միշտ կ'ասէր, աչք խընդագին .
 « Բարի գործերդ միշտ չըրին դէմ
 « Հեղեղներէն վեր՝ պիտ' ելնեն,
 « Աղօթասէր, բարի հովուին
 « Ոչխարք պիտի ծըլին ծաղկին:
 « Սըրտանց սիրէ զՄարիամ կոյս,
 « Նա չի թողուր ըզքեզ անյոյս »:

Նա՝ խաշնարած մի աղջըկան
 « Արի, ասաց, մեք միաբան
 « Մունըր դընենք խոտին վերան,
 « Ասենք կուսին սուրբ վարդաբան:

« Ատուածամայր մեր դիմաց
 « Երկընքին գուռը կ'անէ բաց:
 « Սըրտանց սիրենք ըզՄարիամ կոյս,
 « Նա չի թողուր դատարկ մեր կոյս »:

Օր մի թողով չընեն և հօտ
 Նոյն և մախաղը գեղին մօտ,
 Նա միս մինակ առաջ գընաց
 Կընձնոյն ներքև . տեսաւ դիմաց
 Կոյսն Մարիամ կայնած չիտակ .
 Այն ինչ օր էր, այն ինչ մեծ փառք:
 Սիրենք սըրտանց ըզՄարիամ կոյս,
 Նա չի թողուր դատարկ մեր կոյս:

Կոյսն երեցաւ յոյժ փառաւոր,
 Ինչպէս Յիսուս լերին Թափօր,
 Ձախին բըռնած բոք փղոսկրի,
 Աջ ձեռքը կար մի իլ ոսկի:
 Ձապելի սիրտը թուռը ելած,
 Երկըրպագեց կուսին դիմաց:
 Սըրտանց սիրենք ըզՄարիամ կոյս
 Նա չի թողուր ըզմեզ անյոյս:

ԱՍԽԱՐԻՈՒԹ